

Luys Lnyu®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԸ.....	10
5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	11
6. ԱՄՓՈՓՈՒՄ	12

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) իրենից ներկայացնում է առաջիկա տարիներին կառավարության հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ, որի մշակման, քննարկման և հաստատման գործընթացները կարգավորվում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:

ՄԺԾԾ փաստաթուղթը կարևորվում է ոչ միայն առաջիկա տարիներին կառավարության ծրագրերի մասին կարևոր տեղեկատվություն պարունակելու, այլ նաև տնտեսության զարգացումների վերաբերյալ կառավարության սպասումների մասին պատկերացում կազմելու տեսանկյունից: Այս առումով, 2024-2026թթ. ՄԺԾԾ-ի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն կազմվում է ՀՀ տնտեսության վրա էական դրական ազդեցություն ունեցող արտաքին շուկի ներգործությունից հետո: Վերջինս էականորեն փոխել է ՀՀ տնտեսության կառուցվածքը և զարգացման հեռանկարները, ինչը պետք է արտացոլված լինի ՄԺԾԾ փաստաթղթում:

Բացի վերոհիշյալներից, ՄԺԾԾ-ն պետք է պարունակի նաև կառավարության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար նախատեսված ռեսուրսները, քանի որ առաջիկա տարիներին պետական բյուջեով ֆինանսավորում ստանալու համար դրանք պետք է ներառված լինեն միջնաժամկետ ծախսերի ծրագրում, առավել ևս, որ ՄԺԾԾ-ի առաջին տարին իրենից ներկայացնում է առաջիկա տարվա, այս դեպքում՝ 2024-ի, պետական բյուջեի նախագիծը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ սույն վերլուծությունում ուսումնասիրվել են 2024-2026թթ. ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական կանխատեսումները և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև կառավարության ծրագրով նախատեսված նպատակների ուղղությամբ նախանշված ծախսային միջոցառումները, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել, թե ինչպիսի քաղաքականություն է իրականացնելու կառավարությունը նոր ստեղծված տնտեսական իրողությունների և կառավարության ծրագրով ստանձնած պարտավորությունների համատեքստում:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՔՈՎԻԴ-19 համավարակի հետևանքները դեռևս ամբողջությամբ չհաղթահարած՝ ներկայումս աշխարհը բախվել է նոր մարտահրավերի՝ ռուս-ուկրաինական հակամարտությանը և դրա հետևանքներին, որոնք արդեն իսկ բացասաբար են ազդում աշխարհի մի շարք երկրների, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների վրա: Բացասական հետևանքները հիմնականում արտահայտվում են տնտեսական աճի տեմպերի դանդաղմամբ, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրամավարկային քաղաքականությունների խստացմամբ:


Սակայն, ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա ունեցել է էականորեն դրական բնույթ՝ հիմնականում պայմանավորված ՌԴ-ից մարդկանց և կապիտալի ներհոսքի, զբոսաշրջության, ինչպես նաև ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման էական աճերով: Արդյունքում 2022թ. գրանցվել է 12.6% տնտեսական աճ՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների աճով (նպաստումը՝ 9.4 տոկոսային կետ): Մյուս ճյուղերը (բացառությամբ գյուղատնտեսության) նույնպես աճել են և դրականորեն են նպաստել տնտեսական աճին: Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել են ինչպես ներքին (պայմանավորված հիմնականում մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների աճով), այնպես էլ արտաքին պահանջարկը:

Տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2023-ին՝ իրենց վրա կրելով դեռևս նախորդ տարվանից ՀՀ տնտեսության համար ձևավորված նպաստավոր գործոնների ազդեցությունը: Արդյունքում առաջին եռամսյակում գրանցվել է ՀՆԱ-ի 12.1% իրական աճ՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների աճով (նպաստումը՝ 9.1 տոկոսային կետ): Իսկ հունվար-մայիս ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 12.5%:

Այս պայմաններում, կառավարությունը շարունակում է պահպանել 7% տնտեսական աճի թիրախը ինչպես 2023թ., այնպես էլ միջնաժամկետ ժամանակահատվածի համար: Միաժամանակ, ՄԺԾՓ փաստաթղթում նշվում է, որ 7% տնտեսական աճի ապահովումը պայմանավորված է մեծածավալ կապիտալ ծախսերի և տնտեսության ներուժի բարձրացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից նպատակադրած միջոցառումների իրականացմամբ: Ընդ որում, ըստ ՄԺԾՓ փաստաթղթում ներկայացված ներդիրի (Գլուխ 1, Բաժին 1.3, Ներդիր 1), եթե թիրախային աճի ապահովման համար անհրաժեշտ լրացուցիչ մասնավոր ներդրումների և արտահանման ծավալները չապահովվեն, ապա տնտեսական աճը 2023-ին կկազմի շուրջ 5.4-ից 6.0%:

Այլ կառույցների, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները, հատկապես 2024-2026 թվականների համար, զգալիորեն տարբերվում են կառավարության կանխատեսումներից: Օրինակ, ՀՀ ԿԲ-ն կանխատեսում է տնտեսական աճի դանդաղում մինչև 5.0%, իսկ ԱՄՀ-ի կանխատեսումները ավելի ցածր են և հասնում են 4.4-ից 4.5%-ի՝ 2025 և 2026 թվականներին: Դա նշանակում է, որ կառավարության կողմից ներկայացված կանխատեսումների, այդ թվում՝ լրացուցիչ մասնավոր ներդրումների և արտահանման ծավալների ապահովման նկատմամբ վստահությունն այդքան էլ մեծ չէ, և անկախ կառույցները հակված են այն սցենարներին, որոնց դեպքում ՀՀ տնտեսական աճը միջնաժամկետում մոտենալու է իր պոտենցիալին:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %



Ըստ ՄԺԾԾ-ի՝ միջնաժամկետում՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի աճով, պղնձի գների բարձր մակարդակով, տնտեսությունում իրականացվող պետական և մասնավոր ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ ծառայությունները կաճեն միջին հաշվով 6.7%-ով, արդյունաբերությունը՝ 7.1%-ով, շինարարությունը՝ 11.0%-ով, իսկ գյուղատնտեսությունը՝ 3.2%-ով:

Ըստ կանխատեսումների՝ 2023թ. վերջնական սպառումը կաճի 5.8%-ով, իսկ ներդրումները՝ 18.2%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի աճը, օտարերկրացիների ներհոսքը, բնակարանային շինարարության շարունակվող աճը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունը: Միջնաժամկետում սպառումը միջին հաշվով կաճի 6.1%-ով, իսկ ներդրումները՝ 12.2%-ով: Միջնաժամկետում ներդրումների վրա դրական ազդեցություն կունենան ՀՀ կառավարության կողմից

Ենթակառուցվածքներում ներդրումների նախատեսվող շարունակական աճը, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված միջոցառումները:

Աղյուսակ 1. 2024-2026թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2020 փաստ.	2021 փաստ.	2022 փաստ.	2023 սպասում	2024 ծրագիր	2025 կանխ.	2026 կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.9	6,991.8	8,501.4	9,533.0	10,608.1	11,804.6	13,136.0
Տնտեսական աճ, %	-7.2	5.8	12.6	7.0	7.0	7.0	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.8	6.9	8.0	4.8	4.0	4.0	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	3.7	7.7	8.3	2.8	4.0	4.0	4.0
Գնաճ (միջին), %	1.2	7.2	8.6	4.4	3.8	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	-1.4	2.4	6.0	7.5	7.2	7.1	7.0
Գյուղատնտեսություն	-3.7	-0.8	-0.7	1.6	3.1	3.2	3.2
Շինարարություն	-5.9	3.1	18.8	12.1	11.1	11.0	11.0
Ծառայություններ	-9.6	8.6	18.3	6.9	6.8	6.7	6.7
Զուտ հարկեր	-9.9	7.4	8.1	8.7	8.7	8.7	8.7
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	-10.9	1.3	7.9	5.8	5.7	6.3	6.4
Պետական	9.2	-6.2	6.7	1.8	5.3	13.2	13.5
Մասնավոր	-14.0	2.8	8.1	6.5	5.8	5.0	5.0
Հիմնական միջոցներում ներդրումներ ¹	-1.5	23.6	9.5	18.2	13.1	12.5	10.9
Պետական	6.1	26.0	12.4	35.4	17.0	17.3	10.6
Մասնավոր	-3.1	23.0	8.8	14.0	12.0	11.0	11.0
Արտահանում	-33.5	18.6	53.8	25.6	10.7	11.1	10.8
Ներմուծում	-31.5	12.9	34.7	26.3	12.0	12.7	12.5
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ %)							
Ընթացիկ հաշիվ	-3.8	-3.7	-0.9	-2.7	-3.5	-4.2	-4.9
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-10.0	-8.0	-2.1	-2.9	-3.1	-3.4	-3.9
Արտահանում	30.2	36.1	49.7	58.0	59.6	61.4	63.0
Ներմուծում	40.2	44.1	51.8	60.9	62.6	64.8	66.9
Դրամական փոխանցումներ	8.3	9.0	7.6	7.3	7.1	6.9	6.6

¹ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կադրաված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշիռող գործոն, այլ կերպ ասած՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

2023թ. արտահանումը և ներմուծումը կաճեն 25.6%-ով և 26.3%-ով՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի, ինչպես նաև տնտեսական ակտիվության աճով: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի և զբոսաշրջության աճի, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված՝ ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում միջնաժամկետում ապրանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը կաճեն միջին հաշվով 10.9% և 12.4%-ով:

2022թ. դրական տնտեսական զարգացումների պայմաններում բարելավվել է նաև ընթացիկ հաշվի պակասուրդը՝ կազմելով ՀՆԱ-ի 0.9%-ը: Ընթացիկ հաշվի բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների արտահանման բարձր աճով, ինչպես նաև արտաքին որոշ շուկաներում (հատկապես՝ ՌԴ-ում) ՀՀ ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ: Այնուամենայնիվ, 2023թ. առաջին երեք ամիսներին ապրանքների առևտրային հաշվեկշիռը վատթարացել է՝ պայմանավորված ներմուծման առավել մեծ ծավալներով: Սակայն ծառայությունների հաշվեկշիռը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ ավելացմամբ: Պայմանավորված առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ և ՀՆԱ-ում դրամական փոխանցումների դերի նվազմամբ՝ 2023թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կվատթարանա՝ հասնելով ՀՆԱ-ի 2.7% մակարդակի: Ըստ ՄԺԾԾ-ի՝ միջնաժամկետ հորիզոնում ներմուծման առաջանցիկ աճով (այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող պետական ներդրումների և մասնավոր հատվածի ներդրումների խթանման արդյունքում ներդրումային բնույթի ապրանքների ներմուծման աճով) պայմանավորված՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ մոտենալով իր հավասարակշիռ մակարդակին:

3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2022թ. բավական դրական տարի էր նաև հարկաբյուջետային ցուցանիշների տեսանկյունից: Բարձր տնտեսական աճը և բարձր գնաճը նպաստել են հարկային եկամուտների բարձր աճին (շուրջ 21.4%), ինչի արդյունքում պետական բյուջեի պակասուրդը եղել է սպասվածից ավելի փոքր՝ ՀՆԱ-ի նկատմամբ շուրջ 2.1%՝ պլանավորված 3.0%-ի դիմաց: Բացի այդ, անվանական ՀՆԱ-ի բարձր աճի և ՀՀ դրամի արժևորման հետևանքով ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը էականորեն նվազել է 2022թ. վերջում՝ հասնելով 46.7%-ի:

2022թ. հարկերը և տուրքերը կազմել են ՀՆԱ-ի 22.7%-ը՝ պահպանվելով նախորդ տարվա գրեթե նույն մակարդակում (նվազելով 0.06 տոկոսային կետով):

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությանը դրականորեն են նպաստել շահութահարկի, պետական տուրքի (մետաղական հանքանյութերի արտահանման տուրքերի աճի հաշվին) և այլ հարկային եկամուտների (հիմնականում՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հաշվին) ՀՆԱ-ի նկատմամբ աճերը: Միևնույն ժամանակ, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճին հակազդել են մաքսատուրքերի և եկամտային հարկի (հիմնականում՝ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի ծավալի աճով պայմանավորված) ՀՆԱ-ի նկատմամբ 0.5-ական տոկոսային կետով նվազումները:


2023թ. հինգ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները շարունակում են աճել բարձր տեմպերով՝ պայմանավորված բարձր տնտեսական աճով և հարաբերականորեն բարձր միջին գնաճով: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 18.7%-ով, իսկ հարկային եկամուտների աճը կազմել է 19.7%, որը թեև ցածր է նախորդ տարվա աճերից, սակայն դեռևս բավական բարձր ցուցանիշ է:

2023թ., հիմնականում հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 23.45% կամ 2235.4 մլրդ դրամ: Հարկային քաղաքականության միջոցառումների ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2023-ին նախորդ տարվա համեմատ գնահատվում է բացասական՝ պայմանավորված մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի չեղարկմամբ, ինչպես նաև եկամտային հարկի դրույքաչափի նվազեցման ազդեցությամբ, որոնք որոշ չափով մեղմվում են ակցիզային հարկի դրույքաչափի բարձրացմամբ և խաղային ոլորտի ու միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերանայմամբ: Սակայն, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վրա այս գործոնների բացասական ազդեցությանը (ՀՆԱ-ի շուրջ 0.6 տոկոսային կետ) պետք է հակազդեն հարկային վարչարարության ջանքերը:

Միջնաժամկետում կառավարությունը նույնպես նախատեսում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճ՝ տարեկան շուրջ 0.75 տոկոսային կետի չափով: Այս կանխատեսումների բարեհաջող իրագործման դեպքում, հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2026թ. կհասնի 25.7%-ի՝ գերազանցելով ՀՀ կառավարության ծրագրով սահմանված 25.0% թիրախը: Սակայն, հարկ է նշել, որ, օրինակ՝ 2022թ. համար հարկեր/ՀՆԱ հարաբերակցության էական աճ էր նախատեսված ինչպես 2023-2025թթ. ՄԺԾԾ-ով (շուրջ 0.8 տոկոսային կետի չափով), այնպես էլ 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումներով, մինչդեռ 2022թ. հարկեր/ՀՆԱ-ի աճ չի գրանցվել: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճը բարձր չի

եղել նաև պատմական տվյալներով (վերջին 10 տարիներին բարելավման միջին տեմպը կազմել է 0.2%, իսկ վերջին երեք տարիներին՝ 0.1%): Հետևաբար, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության նման հավակնոտ աճի պլանավորումը բավական ռիսկային է:

Գծապատկեր 2. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



2022թ. պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են, սակայն ոչ այնքան բարձր տեմպով՝ 11.9%-ով: Ծախսերի աճի՝ հարկերի աճից ցածր լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարությունը մի կողմից՝ ունի ընթացիկ ծախսերը բարձրացնելու օրենսդրական սահմանափակում (համաձայն հարկաբյուջետային կանոնների), մյուս կողմից՝ կապիտալ ծախսերի իրականացման անբավարար կարողություններ: Հետևաբար, նույնիսկ հարկային եկամուտների բարձր աճի պարագայում ծախսերի աճի տեմպը սահմանափակ է: Այս իրավիճակում, բնականաբար, պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2021թ. համեմատ նվազել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 26.4%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 21.9%:


Այնուամենայնիվ, 2022թ. կապիտալ ծախսերի աճի տեմպը բավական բարձր է եղել. ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 380.4 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 389.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 78.2%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 4.5%:

Պետք է նշել նաև, որ 2022թ. կապիտալ ծախսերի կատարողականը նույնպես բարելավվել է՝ կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 94.9%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.4 տոկոսային կետով: Ընդ որում, պետական

բյուջեի տարեկան պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 110.6%: Այնուամենայնիվ, 2023թ. առաջին կիսամյակում կապիտալ ծախսերի կատարողականը շարունակում է մտահոգիչ մնալ: Մասնավորապես, հունվար-մայիս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) ծավալը կազմել է 92.7 մլրդ դրամ, այն դեպքում, երբ հունվար-հունիս ամիսների պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Վերջինս, իհարկե, բավական մտահոգիչ է, քանի որ կապիտալ ծախսերի թերակատարումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ միջնաժամկետ տնտեսական աճի վրա: Իսկ ինչպես նկարագրվեց վերևում, բարձր տնտեսական աճ ապահովելու գործում կառավարությունն էապես կարևորում է պետական կապիտալ ծախսերի դերը:

2023 և 2024 թվականներին կառավարությունը պլանավորում է ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում պահպանել կայուն մակարդակում, իսկ միջնաժամկետում նախատեսում է որոշակի աճ՝ հիմնականում սոցիալական խնդիրների լուծման (նվազագույն աշխատավարձի և կենսաթոշակների աճ) նպատակով: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում պլանավորվում է ագրեսիվ կերպով մեծացնել՝ 2026թ. հասցնելով ՀՆԱ-ի 6.6%-ին: 2024-2026թթ. ՄԺԾԾ-ով կապիտալ ծախսերի պլանավորված ցուցանիշները ավելի բարձր են, քան նախկին փաստաթղթերով սահմանված թիրախները (Գծապատկեր 3): Սակայն, հաշվի առնելով կապիտալ ծախսերի թերակատարման խնդրի շարունակականությունը, նման բարձր ցուցանիշների հասնելը բավական դժվար կլինի:


Գծապատկեր 3. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ինչպես արդեն նշվեց, 2022թ. դրական տնտեսական զարգացումների արդյունքում պետական բյուջեի պակասուրդը ձևավորվել է սպասվածից ցածր

մակարդակում՝ ՀՆԱ-ի նկատմամբ 2.1%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.5 տոկոսային կետով: Առաջիկա տարիներին կառավարությունը պլանավորում է փոքր-ինչ մեծացնել բյուջեի պակասուրդը՝ հասցնելով այն ՀՆԱ-ի 2.9%-ին, իսկ միջնաժամկետ հատվածում՝ նվազեցնել մինչև 2.5%: Այդ պայմաններում, ըստ ՄԺԾԾ-ի, հնարավոր կլինի մի կողմից՝ ապահովել կառավարության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, մյուս կողմից՝ կառավարության պարտք//ՀՆԱ հարաբերակցությունը պահպանել 50%-ից ցածր մակարդակում:


Գծապատկեր 4. Դեռական բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում



Դեռևս նախորդ տարի հաստատված կառավարության պարտքի բեռի նվազման 2022-2026թթ. վերանայված ծրագրով պարտքի բեռը նախատեսվում էր հասցնել 53.5%-ի 2026 թվականին՝ 5 տարիների ընթացքում նվազեցնելով 6.7 տոկոսային կետով: Սակայն, ընդամենը մեկ տարվա ընթացքում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազեց 13.5 տոկոսային կետով (պայմանավորված ՀՀ դրամի արժևորմամբ (11 տոկոսային կետով) և ՀՆԱ իրական աճով (6.2 տոկոսային կետով)՝ ժամանակից շուտ ավարտելով պարտքի նվազեցման ծրագիրը: Քանի որ 2022թ. վերջում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ցածր է եղել 50%-ից, ապա այս տարի կառավարությունը, ըստ հարկաբյուջետային կանոնների, պարտավորված չէ ներկայացնել պարտքի բեռի նվազեցման ծրագիր:

Ընդհանուր առմամբ ներկայացված հարկաբյուջետային քաղաքականությունը համահունչ է պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը, քանի որ պլանավորվող հորիզոնում բյուջեի կապիտալ ծախսերը մեծ են լինելու բյուջեի պակասուրդից (պարտքը ուղղվելու է կապիտալ ծախսերի իրականացմանը), իսկ ընթացիկ ծախսերը փոքր են լինելու հարկային եկամուտներից:

Գծապատկեր 5. Կառավարության պարտքը, % ՀՆԱ-ում



Միջնաժամկետում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա չեզոք կլինի՝ հարկերի զսպող (պայմանավորված հիմնականում հարկային վարչարարության ջանքով՝ ապահովելու 2026թ. առնվազն 25% հարկեր/ՀՆԱ թիրախը) և ծախսերի խթանող ազդեցություններով (պայմանավորված հիմնականում տնտեսական ներուժը խթանող կապիտալ ծախսերի աճով):

4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՄԺԾԾ-ի հիմքում դրված մակրոտնտեսական և հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է 2023-ի ապրիլի վերջի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Ինչպես ցանկացած կանխատեսում, դրանք պարունակում են ռիսկեր՝ կապված այն հանգամանքով, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2024-2026թթ. ՄԺԾԾ փաստաթղթում ներկայացվող ռիսկերը հիմնականում վերաբերում են 2022-ի ընթացքում ՌԴ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքի հետշրջմանը, համաշխարհային տնտեսական անկման կամ ճգնաժամի առաջացման հավանականությանը, ինչպես նաև պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության կամ հարկային եկամուտների սպասվածից ցածր լինելու հետևանքներով ֆինանսավորման կարիքի առաջացմանը:

Կառավարության, մասնավորապես ՀՀ ՖՆ կողմից սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ «անվտանգության բարձիկների» ստեղծման տեսքով: Այդ «բարձիկները»

վերաբերում են բյուջեի ծախսերում պահուստային ֆոնդի նախատեսմանը, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվում անհրաժեշտ ռեսուրսի ապահովմանը: Մասնավորապես, բյուջեի ընթացիկ ծախսերում 2024-2026թթ. նախատեսվել է պահուստային ֆոնդ ՀՆԱ-ի 0.6-ից 1.4%-ի չափով, որը կարող է օգտագործվել հարկային եկամուտների՝ սպասվածից ցածր լինելու պարագայում այդ չափով ծախսերի կրճատման համար: Բացի այդ, ՀՆԱ-ի առնվազն 1 տոկոսի չափով նախատեսվել է գանձապետական կայունացման հաշվում ռեսուրսի ապահովում, որը կարող է օգտագործվել տնտեսական ճգնաժամի կամ այլ բացառիկ իրավիճակի ի հայտ գալու պարագայում:

5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

2024-2026թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվել են կառավարության ծրագրով սահմանված հիմնական թիրախների գծով աշխատանքների իրականացումը՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի գծով: Կապիտալ ծախսերի առաջնահերթությունները միջնաժամկետ հատվածի համար հիմնականում վերաբերելու են կրթության (300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցում, նորոգում կամ հիմնանորոգում), ճանապարհաշինության (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, ճանապարհների ցանցի նորոգում, հիմնանորոգում) և ջրային տնտեսության (15 փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագիր) ոլորտներին:

Ընթացիկ ծախսերը, մյուս կողմից, պարունակելու են աշխատանքային և այլ կենսաթոշակների բարձրացմանն ուղղված ծախսեր՝ ապահովելով նվազագույն կենսաթոշակը պարենային զամբյուղի (35,079 դրամից կդառնա 39,500 դրամ), իսկ միջին թոշակը նվազագույն սպառողական զամբյուղի (65,062 դրամից կդառնա 73,116 դրամ) արժեքին մոտարկումը: Արդյունքում սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերը 2024-2026թթ. կկազմեն համապատասխանաբար՝ 732.4, 818.6 և 952.7 մլրդ դրամ, այն դեպքում, երբ 2022թ. սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը կազմել են 614.4 մլրդ դրամ:

Կապիտալ ծախսերի գծով նախատեսվել է գումարներ հատկացնել դպրոցների շինարարությանն ու վերանորոգմանը, որի շրջանակներում առկա է երկու ծրագիր՝ «Ապահով դպրոց» և «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր», որոնց գծով նախատեսված գումարները 2024-2026թթ. կազմում են համապատասխանաբար 283.3 և 37.1 մլրդ դրամ: Սակայն, մանկապարտեզների կառուցմանն ուղղությամբ հստակ միջոցառումներ ՄԺԾԾ հավելվածներում ներառված չէ, հետևաբար պարզ չէ, թե որքան գումար է

հատկացվելու 500 մանկապարտեզի շինարարության ուղղությամբ: Ընդ որում, ՄԺԾՓ փաստաթղթերում հստակ չի նշվում, թե որքան դպրոց կամ մանկապարտեզ է կառուցվելու, որքան է վերանորոգվելու և որքան է հիմնանորոգվելու: Այս առումով, ստացվում է, որ ծրագրերը պարզապես նախանշված են, սակայն դրանց քանակական չափերի թիրախները դեռևս հստակեցված չեն, այնինչ ՄԺԾՓ-ում դրանք արդեն իսկ պետք է ներառված լինեին:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ նշենք, որ 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում է բավական բարենպաստ տնտեսական միջավայրում, և կառավարությունն այդ տեսանկյունից լայն հնարավորություններ ունի հավակնոտ ծրագրեր ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ, կառավարությունն իր առջև իրավացիորեն թիրախ է սահմանել պահպանելու վերջին տարվա տնտեսական զարգացումների արդյունքում ձեռք բերված պարտք/ՀՆԱ հարաբերակցության համեմատաբար ցածր մակարդակը՝ թիրախավորելով այնպիսի պակասուրդի ապահովումը, որի պայմաններում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 50%-ից ցածր կմնա: Այնուամենայնիվ, ներկայացված միջնաժամկետ ծախսերի ծրագիրն առաջացնում է որոշ մտահոգություններ, որոնցից առավել ակնառուները հետևյալներն են.

1. Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հիմնված է թիրախավորված, այլ ոչ թե կանխատեսված տնտեսական աճի վրա, ինչի արդյունքում ձևավորվում է ռիսկային միջավայր: Տնտեսական աճի ցուցանիշն էական նշանակություն ունի ՄԺԾՓ փաստաթղթի համար, քանի որ դրանից է կախված անվանական ՀՆԱ-ի, հետևաբար նաև հարկային եկամուտների ձևավորումը: Հարկային եկամուտների մեծությունն իր հերթին պայմանավորում է կառավարության ծախսերի մակարդակը, և արդյունքում ձևավորվում է բյուջեի պակասուրդի մեծությունը: Եթե տնտեսական աճի ցուցանիշը անիրատեսական է, ապա վտանգվում է կառավարության հարկային եկամուտների կանխատեսումների իրականացումը, որն էլ իր հերթին կարող է խախտել հարկաբյուջետային քաղաքականության պլանավորված ուղղությունը՝ հանգեցնելով կա՛մ ծախսերի իրականացման անկարողությանը, կա՛մ պարտքի ավելի բարձր ցուցանիշի ձևավորմանը:

2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճի տեմպը նույնպես վստահություն չի ներշնչում: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի մասով, ինչպես տնտեսական աճի դեպքում, պարզապես թիրախավորվել է կառավարության ծրագրով նախատեսված թիրախի՝ 25%-ի ապահովումը՝ առանց հաշվի առնելու դրա իրատեսականությունը: Այսպես, 2024-2026թթ. նախատեսվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարեկան շուրջ 0.75-ից 0.8 տոկոսային կետով

բարելավում, այնինչ վերջին 10 տարիներին հարկեր/ՀՆԱ-ի բարելավումը միջին հաշվով կազմել է 0.2 տոկոսային կետ, իսկ վերջին երեք տարիներին՝ 0.1 տոկոսային կետ: Հետևաբար, թիրախավորված բարելավման տեմպը մտահոգիչ է, որի իրականացման ծախսողումը նույնպես կհանգեցնի նախորդ կետում նշված հետևանքներին: Ավելին, ՄԺԾԾ-ում չի հստակեցվում, թե միջնաժամկետում ինչ միջոցառումների արդյունքում է նախատեսվում ապահովել բարելավումը (միայն նշվում է, որ ապահովվելու է ինչպես հարկային օրենսդրության, այնպես էլ վարչարարության բարելավման հաշվին՝ առանց հստակեցնելու միջնաժամկետում նախատեսվող միջոցառումները), ինչն առավել անորոշ է դարձնում այդ նպատակի իրագործումը:

3. Կապիտալ ծախսերի թերակատարման հիմնախնդիրը պահպանվում է, ինչը կարող է վտանգել նաև ՄԺԾԾ-ով նախատեսված կապիտալ ծախսերի իրականացումը: 2024-2026թթ. ՄԺԾԾ-ի հիմքում դրված է թիրախային 7% տնտեսական աճը, որի ապահովման կարևոր գործոններից մեկը, ըստ կառավարության հիմնավորումների, հանդիսանալու է պետական կապիտալ ծախսերի աճը: Սակայն, հաշվի չի առնվում, որ այդ կապիտալ ծախսերը հիմնականում թերակատարվում են, և չեն աճում այն չափով, ինչ նախատեսվում է: Այդ իրավիճակը շարունակվում է նաև 2023թ. առաջին կիսամյակում: Մասնավորապես, հունվար-մայիս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) ծավալը կազմել է 92.7 մլրդ դրամ, այն դեպքում, երբ հունվար-հունիս ամիսների պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Ավելին, փաստացի իրականացված ծախսերը փոքր են նույնիսկ առաջին եռամսյակի համար նախատեսված 98.1 մլրդ դրամից: Հետևաբար, այս առումով մտահոգություններն ապագա կապիտալ ծախսերի ամբողջական կատարման մասով պահպանվում են:

4. ՄԺԾԾ-ով նախատեսված ծրագրերի գծով չկան հստակ չափելի արդյունքային ցուցանիշներ: 2024-2026թթ. ՄԺԾԾ-ում ներկայացվում է, որ առաջիկա երեք տարիների ընթացքում իրականացվելու է կառավարության ծրագրով նպատակադրված 300 դպրոցների և 500 մանկապարտեզների շինարարության, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները: Սակայն, այս առումով որևէ քանակական չափելի թիրախ ըստ տարիների չի ներկայացվում: Ավելին, հստակ չէ նաև, թե այս նպատակների իրագործման ուղղությամբ որքան ֆինանսավորում է նախատեսվել: Սա օրինակներից մեկն է, սակայն պետք է նշել, որ մյուս ծրագրերի գծով պատկերը նույնն է՝ նույնպես չափելի արդյունքային ցուցանիշներ չեն ներկայացվում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: